

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԳԻԾԱՆՔԻ
ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՄԻՋՈՑ Պ. Գ. ՎՈՒՂԻԱՌԻԶԻ
“JEEVES IN THE OFFING” ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գեղարվեստական գրականության լեզվի պատկերավորման համակարգում իր ուրույն տեղն ունի երգիծանքը: Երգիծանքը ասելիքը առավել վառ, զուսպագեղ ու աշխույժ դարձնելու միջոց է, միևնույն ժամանակ նպաստում է կերպարին կամ իրավիճակին դիպուկ բնորոշումներ տալուն: Պ. Գ. Վուդհաուզի ստեղծագործություններում երգիծանքը խոսքի արտահայտչականության առանցքային տարրերից է:

Բազմաթիվ վեպերի, կարճ պատմվածքների, պիեսների, քնարական բանաստեղծությունների հեղինակ՝ անգլիացի երգիծաբան Պելհամ Գրենվիլ Վուդհաուզի խոսքարվեստը լի է ոճական բազմաթիվ հնարներով, պատկերավորման և արտահայտչական միջոցներով, երգիծանքի բազմազան դրսևորումներով, որոնք յուրօրինակ գույներ և երանգներ են հաղորդում ստեղծագործություններին:

Երգիծանքը որպես ծիծաղելիի տարատեսակ բնորոշելու համար սովորաբար համադրում են ծիծաղի հետ: Տարբեր հեղինակներ սրա վերաբերյալ տվել են տարբեր կարծիքներ:

Ըստ Յ. Բորևի երգիծանքը «ծիծաղի լավագույն քույրն է» (Յ. Խ. Բорев, 1970:11): Բայց ոչ բոլոր դեպքում է երգիծանքը ծիծաղ առաջացնում, կարելի է ծիծաղել ելնելով որևէ այլ պատճառից, որը ոչ մի կապ չունի երգիծանքի հետ:

Մինչդեռ Ա. Ջիսը գտնում է, որ «երգիծականը միշտ ծիծաղելի է, բայց ծիծաղելին դառնում է երգիծական միայն այն դեպքում, երբ դրա մեջ, ինչպես ցանկացած էսթետիկական երևույթի մեջ, ներքին ձևի միջոցով արտահայտված է իմաստ, որը գնահատվում է կոնկրետ էսթետիկական իդեալների տեսանկյունից»: Եթե ծիծաղը ստեղծագործության մեջ նոր մտքի խթան չի դառնում, չի նպաստում իմաստի հարստացմանը, չի օգնում ընթերցողին ընկալելու գրողի ասելիքը, այլ հանգեցնում է սոսկ ծիծաղի, ապա մենք գործ ունենք ոչ թե երգիծականի, այլ պարզապես ծիծաղելիի հետ (Յ. Բ. Лземидок, 1974:8): Ըստ Ա. Ջիսի՝ նույնիսկ եթե մեկ անգամ, երբ խախտվում է երգիծականի ու ծիծաղելիի սահմանագիծը, ապա գեղարվեստական ստեղծագործությունը կորցնում է իր արժեքը:

«Ծիծաղելիի հիմքը ձևի և բովանդակության անհամապատասխանությունն է» (Չ.В. Белинский, 1948 : 288):

Հայտնի է, որ բառերն առանձին վերցրած հազվադեպ են լինում ծիծաղելի, սակայն հաճախ իրար հետ համադրելիս տեքստին հաղորդում են երգիծական երանգ: Երգիծական ֆոն ստանալու համար գրողը պետք է վարպետություն ունենա բառերը և արտահայտությունները համատեքստից բխեցնելու: Ցանկացած բառ կամ բառակապակցություն իմաստավորվում է միայն այն դեպքում, երբ անմիջականորեն կապված է գրողի ասելիքին և համահունչ է գեղարվեստական ստեղծագործության թեմային:

Պ. Գ. Վուդհուսի ստեղծագործություններում երգիծանքի դրսևորման առավել հաճախ հանդիպող եղանակներից է փոխաբերությունը:

Փոխաբերությունը պատկերավորման այնպիսի միջոց է, որի դեպքում երկու առարկաների կամ երևույթների արտաքին կամ ներքին նմանության հիման վրա մի բառի փոխարեն գործածվում է մեկ այլ բառ:

Գեղարվեստական խոսքում բառերը մեծ արտահայտչականություն են ծեռք բերում հատկապես փոխաբերաբար գործածվելու դեպքում: Գեղարվեստական գրականություն ընթերցելիս բառի փոխաբերական իմաստի ըստ ամենայնի ըմբռնումը մեծապես կախված է ընթերցողի՝ տվյալ լեզուն լավ տիրապետելու հմտությունից: Որքան անսովոր, անսպասելի է փոխաբերականությունը, այնքան ավելի տպավորիչ են դառնում հուժկորո ու երգիծանքը:

Օրինակ՝ In a matter of seconds by Shrewsbury clock, as Aunt Dahlia would have said, I could see that she was going to come out with one of those schemes or plans of hers that not only **stagger** humanity and **turn the moon to blood** but lead to some unfortunate male — who on the present occasion would, I strongly suspected, be me-getting immersed in what Shakespeare calls a **sea of troubles**, if it was Shakespeare. (P.G. Woodhouse 1960:48)

Տվյալ օրինակի **stagger, turn the moon to blood sea of troubles** ընդգծված բառերն ունեն փոխաբերական իմաստ: Հեղինակը խոսում է Ռոբերտայի ծրագրերի մասին, որոնց մասին Վուսթերը ոչինչ չգիտեր, սակայն լավ ճանաչելով նրան պատկերացնում էր, թե ինչ կարող էր նա մտածել և ծրագրել: Բառերը՝ **stagger, turn the moon to blood**, որոնք հեղինակը ընտրել է նրա ծրագրերը ընթերցողին ներկայացնելու համար շատ պատկերավոր է և հենց այս բառերը արդեն հիմք են տալիս ընթերցողին պատկերացնելու թե Վուսթերը, իրոք, ինչպիսի մեծ դժվարությունների և խոչընդոտների մեջ կարող է ընկնել: Դժվարություններ, որոնց մասին ևս հեղինակը խոսում է գործածելով sea of troubles փոխաբերությունը:

Փոխաբերություններն արտահայտվում են բառերով, երբեմն բառակապակցություններով: Այս դեպքում բառը փոխաբերական իմաստ է ձեռք բերում տվյալ կապակցության մեջ գործածված լինելու շնորհիվ: Է. Աղայանը բառական փոխաբերությունները համարում է մակերեսային, իսկ կապակցականը՝ խորքային: (1.Է. Աղայան, 1987: 341-342):

Բառային փոխաբերությունները հիմնված են փոխաբերվող և փոխաբերյալ բառերի ցույց տված առարկայի որևէ հատկանիշի նմանության վրա: Օրինակ՝ Her **honeyed** words were wasted. (6. P.G. Woodhouse 1960:33)

Այս օրինակում **honeyed** բառային փոխաբերությունը գործածելով հեղինակը ցույց է տալիս իր երգիծական վերաբերմունքը Բերթիի հանդեպ: Բերթին ջանք չխնայելով օգտագործում է սիրալիր և հաճելի բառեր, փորձում է ցույց տալ իր բարյացակամ վերաբերմունքը տիկին Քրիմի հանդեպ, սակայն իրականում միայն ցանկանում է գրավել տիկինը Քրիմի ուշադրությունը, իսկ տիկինը Քրիմը առանց ուշադրություն դարձնելու նրա վրա շարունակում է իր գործը:

Կապակցական փոխաբերությունը երկու կամ ավելի բառերի զուգակցումն է, որի փոխաբերական իմաստը ըմբռնվում է միայն համապատասխան բառային միջավայրում:

Օրինակ՝ However rough the going, there is one sustaining thought to which we can hold. **The storm clouds may lower and the horizon grow dark, we may get a nail in our shoe and be caught in the rain without an umbrella, we may come down to breakfast and find that someone else has taken the brown egg.** but at least we have the consolation of knowing that we shall never see Aubrey Gawd-help-us Upjohn again. (6. P.G. Woodhouse 1960:6)

Storm, clouds, lower, horizon, grow, dark, nail, shoe, caught in the rain without an umbrella, we may come down to breakfast and find that someone else has taken the brown egg ... այս բառերը առանձին վերցրած փոխաբերական իմաստ չունեն, սակայն կապակցության մեջ այս բառերի տեղին և դիպուկ համադրումով հեղինակը ցույց է տալիս, որ Վուսթերը և իր ընկեր Քիփերը պատրաստ են դիմանալու ամեն ինչի, միայն թե նորից չհանդիպեն Ափջոնի հետ, ում ճանաչում են դեռ դպրոցից և իրենց ատելությունը նրա հանդեպ գալիս է դեռ այդ ժամանակից:

Մեկ այլ օրինակում՝ It's always a bit difficult to open the conversation with a blend of **brain specialist and butler**, especially if your relations with him in the past have not been too chummy, and I found myself rather at a loss to know how to set the ball rolling. (6. P.G. Woodhouse 1960:40)

Վուսթերը պարոն Ռոդերիկ Գլոսոփի՝ իր հորաքրոջ մտերիմ ընկերոջ մասին խոսելիս միշտ օգտագործում է brain specialist and butler կապակցական փոխաբերությունը, որով արտահայտում է իր բացասական և ծաղրական վերաբերմունքը: Գլոսոփին անվանելով brain specialist նկատի ունի ոչ թե այն, որ նա շատ խելացի է, այլ այն, որ նա իրականում ոչինչ չգիտի, սակայն փորձում է բոլորի վրա թողնել խելացի և բանիմաց մարդու տպավորություն:

Butler (ծառայապետ) բառը փոխաբերական գործածությամբ մեկ այլ երգիծական երանգ է հաղորդում երկխոսությանը: Այս բառի կիրառմամբ հեղինակը նրան անվանում է ծառայապետ, փորձելով ցույց տալ այն, որ նա իրեն զգում և համարում է պետ, ղեկավար, մարդ, ով կարողանում է ղեկավարել, սակայն Գլոսոփը չի ուզում հիշել այն փաստը, որ ինքը ևս «ծառա» է և ենթարկվում է ուրիշներին: Հեղինակը ոչ միայն այս օրինակում է արտահայտում իր բացասական վերաբերմունքը Գլոսոփի հանդեպ, այլ ամբողջ "Jeeves in the Offing" ստեղծագործության մեջ փորձում է ընթերցողին ցույց տալ նրա դատարկ լինելը:

Փոխաբերության մեկ այլ դասակարգում է առաջարկել Վ. Վակուռովը:

Ըստ բառերի պատկերավորության պահպանման աստիճանի, ըստ նորության աստիճանի, Վ. Վակուռովը փոխաբերությունները «թարմության» առումով բաժանում է երեք մասի

1. Ընդհանուր լեզվական փոխաբերություններ, որոնք կորցրել են իրենց փոխաբերական իմաստը:

2. Համալեզվական փոխաբերություններ (ընդհանրական կամ ժողովրդական), որոնցում կապ է նկատվում բառի հիմնական իմաստի հետ:

3. Անհատական, հեղինակային փոխաբերություններ: Սրանք այն բառերն են, որոնք չեն օգտագործվում հասարակության մեջ, այլ հանդիսանում են հեղինակի ստեղծագործության արդյունք (4. В. Вакруш, 1961:45):

Ընդհանուր լեզվական փոխաբերությունները կոչվում են **մարած** փոխաբերություններ և գեղարվեստական խոսքում որևէ ոճական դեր չեն կատարում:

Փոխաբերաբար գործածված բառերում հիմնական ոճական գործառույթներից է խոսողի վերաբերմունքի արտահայտումը, ինչը Պ.Գ Վուդհաուզի ստեղծագործություններում հաճախ ունի երգիծական շեշտվածություն:

Օրինակ՝ 'And a rousing toodle-oo to you, you young **blot on the landscape.**' she replied cordially. "I'm surprised to find you up as early as this. Or have you just got in from a night on the tiles?" (6. P.G. Woodhouse 1960:1)

Այս օրինակում **blot** բառի կիրառումը ակնհայտ է դարձնում հորաքույր Դահիլայի ծաղրական վերաբերմունքը իր զարմիկի՝ Վուսթերի հանդեպ: Այս օրինակում կապ է նկատվում բառի հիմնական իմաստի հետ: Նա ոչնչություն է անվանում Վուսթերին նրա համար, որ նա թուլական և անկայուն մարդ է:

Մեկ ուրիշ օրինակում՝

She had spoken with a cheery **ring** in her voice that told an experienced ear like mine that she was about to start something. (6. P.G. Woodhouse 1960:48)

Ring բառը ունի փոխաբերական իմաստ, արտահայտում է Ռոբերտայի անհամբերությունը, որը միևնույն ժամանակ տագնապ և ազդանշան է Վուսթերի համար: Այս օրինակներում կապ է նկատվում **blot** և **ring** բառերի արտահայտած փոխաբերական իմաստի և իրենց հիմնական իմաստների միջև:

Առավել տպավորիչ են անհատական, հեղինակային փոխաբերությունները, երբ հեղինակը ոչ թե գործածում է բառի՝ լեզվում պատրաստի ձևով գոյություն ունեցող փոխաբերական իմաստներից մեկը, այլ ելնելով տվյալ համատեքստից, բառին հաղորդում է նոր փոխաբերականություն: Եթե համալեզվական փոխաբերությունների դրական առանձնահատկությունը ընթերցողին ծանոթ լինել է, ինչի շնորհիվ ընկալվում է անմիջականորեն, ապա հեղինակային փոխաբերությունները առանձնանում են իրենց թարմությամբ ու անսպասելիությամբ:

Օրինակ՝ “What an admirable suggestion, I said.” “You solve all my problems and **bring the blue bird out of a hat.**” (6. P.G. Woodhouse 1960:4)

Վուսթերի ծառան՝ Զիվը, վերցնելով իր հեթական արծակուրդը, պատրաստվում է մեկնել: Վուսթերը, իմանալով որ մենակ է մնալու, ընկել է խուճապի մեջ և չգիտի թե ինչ է անելու այդ ընթացքում: Դորաքույր Դահիլան, իմանալով այդ մասին, առաջարկում է նրան գալ իր մոտ հյուր: Այս օրինակում **bring the blue bird out of a hat** փոխաբերությունն արտահայտում է այն, որ հորաքույրն իր առաջարկով լուծեց նրա պրոբլեմը և հանեց նրան այդ անմխիթար վիճակից: **blue, bird, hat** բառերը լեզվում չունեն փոխաբերական իմաստ, սակայն հեղինակը տվյալ նախադասության մեջ դրանք օգտագործելով փոխաբերաբար և Վուսթերին համեմատելով թռչունի հետ՝ նշում է նրա անօգնական լինելը: Դեղինակը այստեղ գլխարկ (**hat**) բառի փոխաբեր կարող էր օգտագործել վանդակ բառը, սակայն այստեղ գլխարկ բառը ավելի է շեշտում նրա վատ, նեղված վիճակը: **bird** գոյականի հետ օգտագործելով **blue** ածականը՝ հեղինակը ոչ թե ցանկանում է նշել, թե ինչ գույն ունի թռչունը, այլ հեղինակային-անհատական փոխաբերությամբ մատնանշում է Վուսթերի նուրբ ու բնքուշ լինելը:

Հաջորդ օրինակում ևս Something I want to ask you. It seems that among my fellow – guests at Brinkley will be a Mrs Homer Cream, wife of an American **big butter and egg man**, and her son Wilbert, commonly known as Willie, and the name Willie Cream seemed somehow to touch a chord. (6. P.G. Woodhouse 1960:12)

Big, butter, egg, man բառերի համադրումով հեղինակը պատկերավոր ձևով ներկայացնում է պարոն Քրիմի հարուստ ամերիկացի լինելը: **Butter** բառը յուզող իմաստով գործածված է որպես հարստության, փողի խորհրդանիշ, սակայն միևնույն բնորոշման մեջ **egg** բառն արտահայտում է ժլատության, ոչ շռայլ ապրելակերպի մասին:

Հեղինակը, մի շարք բառեր գործածելով համապատասխան նշանակություններով, ի հայտ է բերում այդ բառերի փոխաբերական նորանոր իմաստներով գործածության հնարավորությունները: Եվ հենց այդ բառերին երգիծական երանգ հաղորդելով փորձում է ցույց տալ անձի կամ երևույթի ծիծաղելի լինելը, մարդկային հարաբերությունների կեղծ և շինծու լինելը: Երգիծանքի միջոցով վեր է հանում մարդկային թերություններն ու թուլությունները: «Երգիծանքը մեր մեջ արթնացնում է հաճելի զգացում, որ մենք այնպիսին չենք, ինչպիսին այդ «անմիտ» մարդը (3.Ю. Боров, 1970: 12):

Պ. Գ. Վուդհաուզը բառերին հաղորդում է այնպիսի փոխաբերական երանգ և համեմատում այնպիսի բառերի հետ, որոնք իրար հետ ոչ մի կապ չեն կարող ունենալ: Բառերը և արտահայտությունները, որոնք հեղինակը վերցրել է առօրյա կյանքից, իր ստեղծագործություններում ստանում են նոր իմաստ և երանգ: Ստեղծագործությունները վերլուծելիս ակնհայտ երևում է, որ ստեղծագործություններում դրանց կիրառումը միանգամայն տրամաբանական է և հեղինակը մինչ այդ չբացահայտված լեզվական միավորների հնարավորությունները ավելի տեսանելի է դարձնում ընթերցողի համար: Արդյունքում ստացվում են հիանալի փոխաբերական իմաստ և ներբերանգ ունեցող փոխաբերական նախադասություններ, իսկ ձեռք բերած փոխաբերությունը թարմություն է հաղորդում խոսքին և յուրահատուկ գրավչություն ստեղծում ընթերցողի համար:

Օգտագործված գրականություն

1. Է. Ադայան «Լեզվաբանության հիմունքներ», Երևան, 1987
2. В. Г. Белинский "Собрание сочинений в трех томах, I, 1948
3. Ю. Боров – " Комическое или о том, как смех казнит несовершенство мира, очищает и обновляет человека и утверждает радость бытия" – Москва, "Искусство", 1970
4. В. Вакуров – "Речевые средства юмора и сатиры в советском фельетоне" – Издательство Московского Университета, 1961
5. Б. Дземидок – "О Комическом" – Москва, Прогресс, 1974
6. P.G. Woodhouse – "Jeeves in the Offing", London: Penguin Books Ltd, 1960